Հաստատված է
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության
10.01.2025թ. թիվ 05/02-10.01.25 որոշմամբ
Վարչության նախագահ
Ա. Առաքելյան

.

Ուժի մեջ է մտնում 25.01.2025թ.
Հրապարակման ամսաթիվը 10.01.2025թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների

ԵՐԵՎԱՆ 2025

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

Ծառայության տեսակը/նկարագրությունը/	Վճարի չափը
1.1 Հաշվի բացման սակագներ.	
1.1.1. Ֆիզիկական անձի համար բանկային հաշվի բացում, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի[1]	2,000 ՀՀ դրամ
1.1.2. Ֆիզիկական անձ հաճախորդի բանկային հաշվի բացում այլ երկրների /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթղթով	50,000 ՀՀ դրամ
1.1.3. Իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ/նոտարի համար բանկային հաշվի բացում, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի	10,000 ՀՀ դրամ
1.1.4. Բանկային հաշվի բացում ա/ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ, բ/ ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատեր, գ/ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ, որի մասնակիցների/բաժնետերերի կազմում 50 տոկոսից ավելին այլ երկրների /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթղթով ֆիզիկական անձ/անձինք կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ/անձինք են, դ/ այլ երկրների /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթղթով ՀՀ-ում գրանցված անհատ ձեռնարկատեր	70,000 ՀՀ դրամ
1.1.5. Հաճախորդի համար լրացուցիչ հաշվի բացում[2]	
ա/ Ֆիզիկական անձի համար	1,000 ՀՀ դրամ
բ/ Իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ/նոտարի համար	3,000 ՀՀ դրամ
1.1.6. Կառուցապատողի հատուկ հաշվի բացում (այդ թվում՝ յուրաքանչյուր լրացուցիչ հաշվի բացում)	20,000 ՀՀ դրամ
1.1.7. Բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի/համատիրության/ համար	
ա/ բանկային հաշվի բացում	5,000 ՀՀ դրամ
բ/ յուրաքանչյուր լրացուցիչ հաշվի բացում	1,000ՀՀ դրամ
1.1.8. սոցիալական ապահովության հատուկ հաշվի բացում	անվճար
1.1.9. Սույն կետում նշված հաճախորդների համար բանկային հաշվի բացում ա/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ բ/ պետական բաժնեմասով/մասնակցությամբ կազմակերպություններ գ/ հասարակական կազմակերպություններ դ/ ՀՀ կենսաթոշակառու հանդիսացող ռեզիդենտ ֆիզիկական անձինք	անվճար
1.1.10. Սոցիալական փաթեթի հատուկ հաշվի բացում	անվճար
1.1.11. ԱՍԿ-ի սպասարկման նպատակով բանկային հաշվի բացում (այդ թվում՝ լրացուցիչ)	անվճար
1.1.12. Բանկային հաշվի սպասարկում, փակում	անվճար
1.2.Կանխիկ գործառնությունների սակագներ.	
1.2.1. Կանխիկ միջոցների մուտքագրում	
ա/ ՀՀ դրամ[3]	ա/ մինչև 100,000 ՀՀ դրամ - 500 ՀՀ դրամ բ/ 100,001 և ավելի ՀՀ դրամ - անվճար
բ/ Հատուկ ընթացակարգով (կապարակնքված պարկերով) կանխիկ գումարների մուտքագրում	0.01% (նվազագույնը 500 ՀՀ դրամ)

գ/ ՌԴ ռուբլի	1.5%
դ/ Բրիտանական ֆունտ ստերլինգ , Շվեյցարական ֆրանկ	2%
ե/ ԱՄՆ դոլար, Եվրո, Վրացական լարի (բացառությամբ զ/ կետի)	անվճար
զ/ մինչև 2004թ. թողարկված 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամների 1,000 ԱՄՆ դոլարից ավել գումարի մուտքագրում կամ կանխիկ այլ արժույթով փոխանակում	1000 ԱՄՆ դոլարը գերազանցող մասի 1%
է/ վճարահաշվարկային համակարգերով կանխիկ գործարքների նպատակով (բացառությամբ զ/ կետի)	անվճար
ը/ արտարժույթի կանխիկ առք ու վաճառքի գործարքների նպատակով (բացառությամբ զ/ կետի)	անվճար
թ/ ավանդների ներդրման գործարքների նպատակով (բացառությամբ զ/ կետի)	անվճար
1.2.2. Հաճախորդի հաշվին մուտքագրված կանխիկ միջոցներից կանխիկի վճարում[4]	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, Վրացական լարի	0%
բ/ ՌԴ ռուբլի	0.5%
գ/ Բրիտանական ֆունտ ստերլինգ , Շվեյցարական ֆրանկ	2%
1.2.3. Ֆիզիկական անձ հաճախորդի հաշվին մուտքագրված անկանխիկ միջոցներից կանխիկ միջոցների վճարում[5]	
ա/ մինչև 30,000 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ
բ/ 30,001 ՀՀ դրամ և ավել	0.5% (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)
գ/ ԱՄՆ դոլար, Եվրո	1% (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)
դ/ ՌԴ ռուբլի	0.5%
ե/ Բրիտանական ֆունտ ստերլինգ, Շվեյցարական ֆրանկ	2%
զ/ Վրացական լարի	0%
1.2.4. **Իրավաբանական անձ/ ԱՁ/նոտար հաճախորդի անկանխիկ միջոցներից կանխիկ միջոցների վճարում[5]**	
ա/ մինչև 30,000 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ
բ/ 30,001 ՀՀ դրամ և ավել	0.3% (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)
գ/ ԱՄՆ դոլար, Եվրո	1% (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)
դ/ ՌԴ ռուբլի	0.5%
ե/ Բրիտանական ֆունտ ստերլինգ, Շվեյցարական ֆրանկ	2%
զ/ Վրացական լարի	0%
1.2.5. **Բանկի հաշվետեր չհանդիսացող անձանց համար և տարանցիկ հաշիվներից կանխիկ միջոցների վճարում[6]**	
ա/ մինչև 30,000 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ
բ/ 30,001 -100,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
գ/ 100,001 ՀՀ դրամ և ավել	1% (նվազագույնը 3,000 ՀՀ դրամ)
գ/ ԱՄՆ դոլար	1% (նվազագույնը 1,000 ՀՀ դրամ)

դ / Եվրո	1% (նվազագույնը 1,000 ՀՀ դրամ)
1.2.6. Հնամաշ և վնասված դրամանիշերի ընդունում և փոխանակում	
ա/ ՀՀ դրամ	անվճար
բ/ ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի	5%
գ/ այլ արտարժույթ	չի ընդունվում
1.2.7. * **Կանխիկ արտարժույթի իսկության ստուգում՝**	
ա/ մինչև 600,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ	5,000 ՀՀ դրամ
բ/ 600,001-ից 1,000,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ	10,000 ՀՀ դրամ
գ/ 1,000,001-ից 5,000,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ	15,000 ՀՀ դրամ
դ/ 5,000,001-ից 10,000,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ	20,000 ՀՀ դրամ
ե/ 10,000,001 ՀՀ դրամին համարժեք արտարժույթ և ավելի	30,000 ՀՀ դրամ
1.2.8. Մետաղադրամների ընդունում մեկ հաճախորդից՝ մեկ բանկային օրվա ընթացքում[8]	
ա/ մինչև 50,000 ՀՀ դրամ	0
բ/ 50,001 և ավելի ՀՀ դրամ	2%
1.3.Փոխանցումներ, վճարումներ[20]	
1.3.1. ՀՀ դրամով կանխիկ ընդունված (առանց հաշիվ բացելու) գումարների փոխանցումներ /վճարումներ/ Բանկի համակարգից դուրս[9]	
ա/ մինչև 100,000 ՀՀ դրամ	200 ՀՀ դրամ
բ/ 100,001-ից 250,000 ՀՀ դրամ	500 ՀՀ դրամ
գ/ 250,001-ից 500,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
դ/ 500,001-ից 1,000,000 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ
ե/ 1,000,001-ից 3,000,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ
զ/ 3,000,001-ից 5,000,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ
Է/ 5,000,001 և ավելի ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ
1.3.2. ՀՀ դրամով կանխիկ փոխանցումներ /վճարումներ Բանկի համակարգում[3]	ա/ մինչև 100,000 ՀՀ դրամ - 500 ՀՀ դրամ բ/ 100,001 և ավելի ՀՀ դրամ - անվճար
1.3.3. Իրավաբանական անձ/ ԱՁ/նոտար հաճախորդի կողմից ՀՀ դրամով անկանխիկ փոխանցումներ /վճարումներ/ Հայաստանի Հանրապետության տարածքում և Բանկի համակարգում[10]	200 ՀՀ դրամ
1.3.4. Ֆիզիկական անձանց կողմից ՀՀ դրամով անկանխիկ փոխանցումներ /վճարումներ/ Հայաստանի Հանրապետության տարածքում և Բանկի համակարգում[10]	անվճար
1.3.5. Արտարժույթով անկանխիկ փոխանցումներ /վճարումներ/ Բանկի համակարգում	անվճար
1.3.6. Ներբանկային անհաշիվ փոխանցումներ գաղտնաբառով (ՀԷԲ փոխանցումներ)	0.6% (նվազագույնը 200 ՀՀ դրամ)
1.3.7. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ապառիկ վարկերի 1,000 ՀՀ դրամը գերազանցող կանխիկ վճարումների իրականացում (բացառությամբ դուրս գրված ապառիկ վարկերի և վերջնական մարումների)	500 ՀՀ դրամ
1.3.8. Կանխիկ և անկանխիկ փոխանցումներ ԱՄՆ դոլար և ԵՎՐՈ արժույթներով Հայաստանի Հանրապետության	

տարածքում	
ա/ մինչև 20,000 ԱՄՆ դոլար կամ 20,000 Եվրո	5,000 ՀՀ դրամ
բ/ 20,001 և ավելի ԱՄՆ դոլար կամ Եվրո	10,000 ՀՀ դրամ
գ/ դեպոնացման նպատակով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված դոլարային պարտատոմսերի գծով ԱՄՆ դոլարով վճարվող տոկոսների և մարման արդյունքում առաջացած գումարների փոխանցումներ	անվճար
1.3.6. Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված փոխանցումների պայմանների փոփոխում, չեղյալացում[11]	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ	2,000 ՀՀ դրամ
բ/ ներբանկային («ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում) փոխանցումների պայմանների փոփոխում և/կամ չեղյալացում	անվճար
1.4.Առարկայազուրկ մետաղական հաշիվների սակագներ	
1.4.1. Առարկայազուրկ մետաղական հաշվի բացում	անվճար
1.4.2. Տարեկան սպասարկման վարձ [12]	5,000 ՀՀ դրամ
1.4.3. Նվազագույն մուտք / հաշվով գործարքի նվազագույն չափ	1 գ
1.4.4. Հաշվին առկա միջոցների դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույք	0%
1.4.5. Փոխանցումներ Բանկի համակարգից դուրս	փոխանցվող մետաղի քանակության գործարքի կատարման պահի դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի 0.1% /նվազագույնը՝ 15,000 ՀՀ դրամ/
1.4.6. Փոխանցումներ Բանկի համակարգում	0 ՀՀ դրամ
1.4.7. Փոխանցված գումարների մուտքագրում հաշվին	5,000 ՀՀ դրամ
1.5.Էսքրոու հաշվի սակագներ	
1.5.1. Էսքրոու հաշվի բացում	անվճար
1.5.2. Էսքրոու հաշվի սպասարկման վարձատրություն	գործարքի գումարի 0.15% /նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ, առավելագույնը 200,000 ՀՀ դրամ/
1.5.3. Էսքրոու հաշվի պայմանագրում պայմանների փոփոխություն	15,000 ՀՀ դրամ
1.6. Ոչ ակտիվ հաշվի (հաճախորդի կողմից չի իրականացվել գործարք 365 օր Բանկում գործող նրա որևէ հաշվով) **պահպանում** (ընդ որում սակագինը գանձվում է միայն հաշվի դրական մնացորդից և հաշիվը փակվում է դրական մնացորդ չլինելու պահից) [13]	
1.6.1. չի իրականացվել գործարք 365 օրից մինչև 730 օր	15,000 ՀՀ դրամ ամսական
1.6.2. չի իրականացվել գործարք 731 օրից մինչև 1095 օր	20,000 ՀՀ դրամ ամսական
1.6.3. չի իրականացվել գործարք 1096 օր և ավելի	25,000 ՀՀ դրամ ամսական
1.7.Հաշվից քաղվածքների, վճարային փաստաթղթերի, SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների տրամադրում՝ ըստ վաղեմության ժամկետների[14]	
1.7.1. Ֆիզիկական անձ հաճախորդի համար	
ա/ *քաղվածքների տրամադրում	0 ՀՀ դրամ
բ/ *նախորդ և տվյալ ամսվա ընթացքում կատարված գործարքների վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում	0 ՀՀ դրամ
գ/* այլ ժամանակատահվածում կատարված գործարքների վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում	1,000 ՀՀ դրամ

դ/ *Տեղեկանքի տրամադրում	5,000 ՀՀ դրամ
ե/ *Նույն օրը մուտքագրված գումարների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	8,000 ՀՀ դրամ
զ/ *SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների տրամադրում	2,000 ՀՀ դրամ
1.7.2. Իրավաբանական անձ /ԱՁ /նոտար հաճախորդի համար	
ա/ Վաղեմությունը մինչև 1 ամիս է	
1. *Վճարային փաստաթղթերի, հաշվից քաղվածքների տրամադրում[15]	0 ՀՀ դրամ
2. * SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների տրամադրում	1,000 ՀՀ դրամ
բ/ * վաղեմությունը 1 ամսից մինչև 3 ամիս է	1,500 ՀՀ դրամ
գ/ * վաղեմությունը 3 ամսից մինչև 1 տարի է	2,500 ՀՀ դրամ
դ/ *վաղեմությունը 1 տարուց ավել է	5,000 ՀՀ դրամ
1.7.3 *Ֆիզիկական կամ իրավաբանական անձի/ԱՁ/ անվամբ ակտիվների/պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	5,000 ՀՀ դրամ
1.8. Հաճախորդի դիմում-հանձնարարականի կատարում[16]	5,000 ՀՀ դրամ ամսական
1.9. *Դրամական չեկային գրքույքների տրամադրում[17]	5,000 ՀՀ դրամ
1.10. *Հաճախորդի հաշիվների վերաբերյալ Աուդիտորական հարցումներով պատասխանի տրամադրում	15,000 ՀՀ դրամ
1.11. *Հաճախորդի կողմից կատարված գործարքների մասին հարցումներ [18]	
ա/ ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի արժույթներով կատարված գործարք	3,000 ՀՀ դրամ
բ/ Այլ արժույթներով կատարված գործարք	30,000 ՀՀ դրամ
1.12. *Ֆիզիկական անձ /այդ թվում ԱՁ/ հաճախորդի կողմից Բանկում բանկային հաշվի, քարտային հաշվի, ժամկետային ավանդի, վարկային հաշվի, արժեթղթերի հաշվի և պահատեղի սպասարկման համար լիազորագրերի տրամադրման հաստատում [19]	3,000 ՀՀ դրամ
1.13. * Իրավաբանական անձ և ԱՁ հաճախորդների փաստաթղթերի ստացման նպատակով ՀՀ պետական ռեգիստրից հարցում	3,000 ՀՀ դրամ
1.14. * Գործարքի վերաբերյալ Հաճախորդի հեռախոսահամարին կարճ հաղորդագրության(SMS) ուղարկում (եթե Հաճախոդը նախնտրել է ստանալ SMS)	
ա/ իրավաբանական անձ /ԱՁ / հաճախորդ	10 ՀՀ դրամ/ յուրաքանչյուր SMS-ը/
բ/ Ֆիզիկական անձ հաճախորդ	20 ՀՀ դրամ/ յուրաքանչյուր SMS-ը/

*սակագինը ներառում է ԱԱՀ

1. Հաճախորդների սպասարկման կենտրոնական գրասենյակում ֆիզիկական անձի համար բանկային հաշվի բացման սակագինը 5000 ՀՀ դրամ է:
2. Հաճախորդների սպասարկման կենտրոնական գրասենյակում ֆիզիկական անձի համար լրացուցիչ հաշվի բացման սակագինը 3000 ՀՀ դրամ է: Լրացուցիչ հաշվի բացման սակագինը գանձվում է հաշիվ ունեցող հաճախորդի կողմից նոր հաշվի /հաշիվների/ բացման համար յուրաքանչյուր անգամ դիմում ներկայացնելուց: Եթե հաճախորդն ունի Բանկում բացված բանկային հաշիվ, ապա Բանկի ցանկացած այլ տարածքային/կառուցվածքային ստորաբաժանումում բացվող նոր հաշիվը /հաշիվները/ համարվում է լրացուցիչ:
3. Բացառությամբ սոցիալական փաթեթի հաշիվներին կատարվող կանխիկ մուտքերի, սակագների վճարման, դեբիտորական պարտքերի, վարկերի 1,000 ՀՀ դրամը չգերազանցող կանխիկ վճարումների, դուրսգրված վարկային պարտավորությունների մարման, վարկային պարտավորությունների վերջնական մարման նպատակներով կատարվող ներբանկային կանխիկ մուտքերի
4. Հաճախորդների հաշիվներից միջոցների կանխիկացման միջնորդավճարը հաշվարկելիս հիմք է ընդունվում միջոցների կանխիկացման օրվա և դրան նախորդող 182 օրվա ընթացքում հաճախորդի հաշվին «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում կանխիկ մուտքագրված և կանխիկ ելքագրված գումարների հանրագումարների տարբերությունը: Տերմինալների միջոցով հաշիվներին մուտքագրված միջոցները համարվում են հաճախորդի հաշվին մուտքագրված անկանխիկ միջոցներ: Ֆիզիկական անձանց կողմից կանխիկ ներդրված մանկական և ժամկետային ավանդների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված Բանկից կանխիկ ձեռքբերված պարտատոմսերի հետ գործարքների արդյունքում (պարտատոմսի վաճառք, պարտատոմսի մարում) մուտքագրված դրամական միջոցների կանխիկացման պարագայում սակագին չի գանձվում:
5. Կանխիկացման միջնորդավճարը չի տարածվում՝
   - ֆիզիկական անձանց կողմից ներդրված մանկական և ժամկետային ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսների, բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների դիմաց վճարվող տոկոսների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի դիմաց վճարված տոկոսագումարների (արժեկտրոնային եկամուտ), «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից վճարված շահաբաժինների, ֆիզիկական անձանց տրամադրված ոսկյա իրերի գրավադրմամբ և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, Բանկի աշխատակիցներին աշխատավարձի ապահովմամբ ՀՀ դրամով տրամադրված վարկերի և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից տեղադրված POS տերմինալներով իրականացված գործարքներից առաջացած անկանխիկ միջոցների կանխիկացման վրա,
   - բարեգործական կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով միջոցների կանխիկացման վրա,
   - սոցիալական փաթեթի հաշիվներից, սոցիալական ապահովության հաշիվներից, պետական աջակցության հաշիվներից գումարների կանխիկացման վրա,
   - Այն վարկատեսակների համար, որոնց տրամադրման ժամանակ նախատեսված է կանխիկացման սակագին, նվազագույն 1000 ՀՀ դրամի շեմը չի կիրառվում:
6. Սույն սակագինը չի տարածվում Բանկում կանխիկ վճարված և հետ վերադարձված գումարների կանխիկացման վրա:
7. Սույն սակագինը չի տարածվում բանկում արտարժույթով որևէ գործարքի կատարման վրա: Քաղաքացու կողմից ներկայացված կանխիկ արտարժույթի իսկությունը ստուգվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գանձապահի կողմից, սահմանված կարգով փաթեթավորվում, դրոշմվում և վերադարձվում հաճախորդին:
8. Սահմանված միջնորդավճարը չի տարածվում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներ ունեցող հաճախորդների վրա և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներին մուտքագրման ժամանակ:
9. ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին օրենքի համաձայն ստեղծված Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի նվիրաբերությունների թիվ 103008660005 հաշվին և դրոշմանիշային վճարների թիվ 900005001186 հաշվին կանխիկ ՀՀ դրամով փոխանցումները իրականացվում են անվճար:
10. Իրավաբանական անձ/ ԱՁ/նոտար հաճախորդի բանկային հաշվից անկանխիկ ՀՀ դրամով փոխանցումների կատարման ժամանակ առանց հաճախորդի կողմից վճարման հանձնարարականի ներկայացման կատարված յուրաքանչյուր փոխանցման համար ի լրումն 1.3.3 կետով սահմանված սակագնի՝ գանձվում է լրացուցիչ 100 ՀՀ դրամ սակագին: Վերոնշյալ և 1.3.3 կետով սահմանված սակագները չեն տարածվում ժամկետային ավանդների ներգրավման, սակագների գանձման, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում առկա իրենց վարկային պարտավորությունների մարումների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պարտատոմսերի և բաժնետոմսերի

ձեռքբերման նպատակով կատարվող փոխանցումների վրա: Կից բաշխման ցուցակով վճարման հանձնարարականի կատարման համար գանձվում է 200 ՀՀ դրամ:

Ֆիզիկական անձ հաճախորդի բանկային հաշվից անկանխիկ ՀՀ դրամով փոխանցումների կատարման ժամանակ առանց հաճախորդի կողմից վճարման հանձնարարականի ներկայացման կատարված յուրաքանչյուր փոխանցման համար գանձվում է 100 ՀՀ դրամ սակագին (բացառությամբ սոցիալական փաթեթի, ժամկետային ավանդների ներգրավման, սակագների գանձման, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում առկա իրենց վարկային պարտավորությունների մարումների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պարտատոմսերի և բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարման հանձնարարականների):

11. Եթե փոխանցումը Բանկից դեռևս չի ուղարկվել, ապա փոխանցման պայմանների փոփոխման/ չեղյալացման սակագինը չի գանձվում: Պայմանների փոփոխումը և/կամ չեղյալացումը իրականացվում է 3-5 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ պետական և տեղական բյուջե կատարված վճարումների): Կատարված փոխանցումները չեն կարող չեղյալացվել, եթե գումարի շահառուն (ստացողը) հրաժարվի փոխանցված գումարը ետ վերադարձնելուց:
12. Տարեկան սպասարկման վճար չի գանձվում, եթե հաշվի մնացորդը զրո է:
13. Սահմանված սակագինը չի տարածվում օրենքով սահմանված կարգով լուծարային գործընթացում գտնվող հաշվետերերի հաշիվների, կալանքի տակ գտնվող բանկային հաշիվների, սոց.փաթեթի, պետ.աջակցության հաշիվների, սոցիալական ապահովության բանկային և քարտային հաշիվների, ինչպես նաև Բանկում ներդրված այն ժամկետային ավանդների վրա, որոնց ժամկետները լրանալուց հետ ավանդները դարձել են ցպահանջ: Սույն սակագինը տարածվում է այն քարտային հաշիվների վրա, որոնց քարտի ժամկետը լրացել է, քարտը չի վերաթողարկվել և քարտի ժամկետին նախորդող 365 և ավելի օրվա ընթացքում հաշվով գործարքներ չեն իրականացվել:
14. Տեղեկանք տրամադրվում է անվճար հետևյալ դեպքերում/հաճախորդներին/
    - Տեղեկանքի տրամադրման պահին Բանկում ներդրված առնվազն 20 օրացուցային օր 3,000,000 ՀՀ դրամ /կամ համարժեք արտարժույթ/ և ավելի գումարի ժամկետային ավանդ ունեցող ֆիզիկական անձանց.
    - նախորդ ամսում բանկային, քարտային և/կամ ժամկետային ավանդի հաշիվների ընդհանուր միջին մնացորդը 10,000,000 ՀՀ դրամը /կամ համարժեք արտարժույթը/ գերազանցող իրավաբանական կամ վերջիններիս տնօրեն հանդիսացող ֆիզիկական անձանց,
    - բանկի աշխատակիցներին,
    - սոցիալական փաթեթի և պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով տեղեկանքների տրամադրման:

Գործարքի կատարման օրը վճարային փաստաթղթի կրկնօրինակը կամ պատճենը (այդ թվում՝ SWIFT հաղորդագրությունների պատճենները և/կամ կրկնօրինակները), ինչպես նաև մինչև մեկ տարի լրանալը «Mobile/Online Banking» համակարգով կատարված գործարքներից փաստաթղթերի կրկնօրինակները տրամադրվում են հաճախորդին անվճար: Մեկ տարուց ավելի «Home Bank», «Mobile/Online Banking» համակարգով կատարված գործարքների փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար գանձվում է 1,000 ՀՀ դրամ սակագին:

15. Նախորդ ամսվա ընթացքում կատարված գործարքների համար քաղվածքների և վճարային փաստաթղթերի տրամադրումը անվճար կարող է իրականացվել մինչև հաջորդող ամսվա վերջին բանկային օրը ներառյալ:
16. Մեկանգամյա կատարում նախատեսող դիմում-հանձնարարականի համար սակագին չի գանձվում, եթե հանձնարարականը կատարվել է 10 օրացուցային օրվա ընթացքում:

Դիմում-հանձնարարականի ընթացիկ կատարման համար սակագին գանձվում է, եթե տվյալ ամսում հանձնարարականի կատարում է տեղի ունեցել:

ԱՍԿ-ների, սոցիալական փաթեթի հաշիվների, պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով, Մանկական ավանդի և «Կամավոր կուտակային ավանդի» համալրման նպատակով, կոմունալ վճարումների կատարման նպատակով տրված դիմում-հանձնարարականները կատարվում են անվճար:

17. Դրամական չեկային գրքույկները Գանձապետական պահառուների սպասարկման նպատակով տրամադրվում են անվճար:

Իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքը դրամարկղի ելքի օրդերով իրականացնելու դեպքում գանձվում է 500 ՀՀ դրամ սակագին:

18. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պատասխանատվություն չի կրում թղթակից բանկի կողմից պատասխան չստանալու համար:
19. Բացառությամբ սոցիալական ապահովության հաշիվների, անհատ ձեռնարկատերերի կողմից վարկի մարման նպատակով տրված լիազորագրերի:
20. ՀՀ տարածքում փոխանցումները կատարվում են ոչ ուշ, քան հաջորդ բանկային օրը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՆ ԱՌԿԱ ՑՊԱՀԱՆՋ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ

Հաշիվներին առկա ցպահանջ դրամական միջոցների համար հաշվարկվում է տարեկան տոկոսադրույք՝ կապված հաշվի տեսակից և/կամ մնացորդից հետևյալ չափերով.

1. Բանկային հաշվին առկա ՀՀ դրամով միջոցների դիմաց	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
0-ից 20,000,000 ՀՀ դրամ	0%	0.00%
20,000,001-ից 50,000,000 ՀՀ դրամ	1%	1.00%
50,000,001 և ավել	2%	2.02%
2. Սոցիալական փաթեթի հատուկ հաշվին առկա դրամական միջոցների դիմաց	0.1%	0.1%
3.Պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցների դիմաց	5%	5.12%
4. Էսքրոու հաշվին առկա դրամական միջոցների դիմաց	0%	0.00%
5.Առարկայազուրկ մետաղական հաշվին առկա միջոցների դիմաց	0%	0.00%

Տոկոսները հաշվարկվում են հաշվետու ամսվա ընթացքում հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական կտրվածքով և վճարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:

Ընդ որում.

- եթե հաշիվը բացվել է և/կամ հաշվին միջոցները գոյացել են հաշվետու ամսվա ընթացքում, ապա միջին օրական տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվետու ամսվա օրացուցային օրերի հաշվարկով,
- եթե հաշվետու ամսվա ընթացքում հաշիվը փակվել է, ապա այդ ամսվա համար տոկոսներ չեն վճարվում:

Հաշվարկում տարին ընդունվում է 365 օր, նահանջ տարվա համար՝ 366 օր:
Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Ստորև ներկայացվում է տոկոսի հաշվարկի օրինակ (հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր, ընդ որում տոկոսագումարները հաշվարկված են՝ հաշվի առած եկամտային հարկը).

Օր.	Ամսվա միջին օրական մնացորդ	Տարեկան անվանական տոկոսադրույքի չափ	Ստացվելիք տոկոսների գումար (31 օրում)
1	25,000,000.00 ՀՀ դրամ	1%	19,109.50 ՀՀ դրամ
2	60,000,000.00 ՀՀ դրամ	2%	91,726.00 ՀՀ դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.aeb.am :

Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել վճարվող տոկոսադրույքը:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐ

Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.
Ավանդները երաշխավորվում են ըստ արժույթային կառուցվածքի հետևյալ առավելագույն չափերով.

Ավանդի արժութային կառուցվածքը		**Ավանդի երաշխավորման առավելագույն չափը**
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	16 միլիոն ՀՀ դրամ[1]
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ[2]

1. Երաշխավորվում է միայն դրամային ավանդը:
2. Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով:

5.1. Բանկում կարող են բացվել ժամանակավոր, հիմնական, առարկայազուրկ մետաղական, էսքրոու և կառուցապատողի հատուկ հաշիվներ, ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ հատուկ հաշիվներ.

5.2. Ժամանակավոր հաշիվը բացվում է նոր ստեղծվող (գրանցման փուլում գտնվող) իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր անձանց համար:

5.3. Հիմնական հաշիվները բացվում են ֆիզիկական և գրանցված իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատեր, նոտար) համար:

5.4. Կառուցապատողի հատուկ հաշիվը բացվում է ֆիզիկական և գրանցված իրավաբանական անձանց համար (անհատ ձեռնարկատեր):

5.5. Կառուցապատողի հատուկ հաշիվներ բացվում են միայն ՀՀ դրամով, իսկ ժամանակավոր և հիմնական հաշիվները՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

5.6. Հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործարքները՝

- հաշվին դրամական միջոցների կանխիկ/անկանխիկ մուտքագրումներ,
- հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների կանխիկ տրամադրումներ,
- հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների անկանխիկ փոխանցումներ,
- հաճախորդի տարբեր հաշիվների միջև դրամական միջոցների փոխանցումներ,
- համապատասխան տեղեկատվական ամփոփագրերով սահմանված այլ գործառնություններ:

5.7. Հաշիվների հեռակառավարումը հնարավոր է իրականացնել Բանկի հետևյալ էլեկտրոնային համակարգերով

- «AEB Mobile» համակարգ՝ շարժական սարքերի համապատասխան հավելվածի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ,
- «AEB Online» համակարգ՝ համացանցի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ:

AEB ONLINE և AEB MOBILE էլեկտրոնային համակարգերով սպասարկման պայմաններին և սակագներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/mobile_banking/:

5.8. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնություններ նույն հաշվով չեն կարող իրականացվել:

5.9. Բանկը հաճախորդի հաշվին փոխանցված դրամական միջոցները (անկանխիկ ոսկին) մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

5.10. Բանկը հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ տալիս կամ փոխանցում է (անկանխիկ ոսկին՝ փոխանցում) ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, իսկ հաճախորդի լիազորված անձանց կողմից հաշվով գործառնությունների իրականացման դեպքում՝ լիազորագիրը բանկին ներկայացվելուց հետո երկու բանկային օրվա ընթացքում՝ եթե լիազորագիրը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին ու Բանկը նույնականացնում է հաճախորդին և վերջինիս կողմից լիազորված անձին:

5.11. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների որոշումների հիման վրա:

5.12. Առանց հաշվետիրոջ կարգադրության ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ դատական ակտերի, հարկադիր կատարման մարմինների, հարկային մարմինների որոշումների հիման վրա հաշվի դրամական միջոցները կարող են բռնագանձվել, որից հետո 30 օրացույցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

5.13. Բանկի նկատմամբ Հաճախորդի դրամական պարտավորությունների կատարման նպատակով Բանկը կարող է անակցեպտ կարգով կատարել հաշվանց, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

5.14. Հաշիվը կարող է փակվել հաճախորդի փակման միակողմանի դիմումով կամ Բանկի կողմից միակողմանի՝ հաշվում դրամական միջոցների բացակայության և մեկ տարվա ընթացքում հաշվով գործառնություններ չկատարվելու, սակագներով սահմանված վճարները, հաճախորդի այլ պարտավորությունները չկատարվելու, ինչպես նաև պայմաններով սահմանված այլ դեպքերում: Հաշվի փակման դեպքում՝ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում, որից հետո հաշիվը փակվում է:

5.15. Հաճախորդը կարող է Բանկին ներկայացնել իր հարցերը, առաջարկները, բողոքները, պահանջները՝ Բանկին գրավոր դիմելով, որին 10 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է Բանկի կողմից պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում հաճախորդը իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

5.16. Բանկային հաշիվների բացման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա:
5.17. Բանկի կողմից ֆիզ անձին վճարվող տոկոսները ենթակա են հարկման Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքով սահմանված չափով:
5.18. Էսքրոու հաշիվը բացվում է միայն ՀՀ դրամով:
5.19. Ֆիզիկական անձ հաճախորդը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
- անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրի գրանցման վկայական կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք և կնիք (հաճախորդի ցանկությամբ) (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
- հարկային կոդ (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից, եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքում և նոտարից).
- նոտարի ծառայողական վկայականը (պահանջվում է նոտարից),

5.20. Ռեզիդենտ իրավաբանական անձը բանկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
5.20.1. Տնօրենի(ղեկավարի) անձը հաստատող փաստաթուղթը,
5.20.2. իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայական (նաև գործող ղեկավարի գրանցման ներդիր) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք և մասնակիցների վերաբերյալ տեղեկանք առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ (հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, հասարակական միավորումների և այն կազմակերպությունների դեպքում, որոնց մասնակիցների հաշվառումը չի կատարվում որևէ պետական մարմնի կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից, մասնակիցների վերաբերյալ տեղեկանք՝ տրված տվյալ կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ), եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքում: Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ, ընդ որում.
մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք:
5.20.3. կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ,
5.20.4. հարկային կոդ (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքում),
5.20.5. ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձման հրամաններից քաղվածքներ կամ հաստատված պատճեններ կամ պաշտոնի ստանձնումը հավաստող այլ փաստաթղթեր (տեղեկանք, պայմանագրի հաստատված պատճեն և այլն),
5.21. Լիազորագրերով հաշիվների բացման համար լիազորված անձը Բանկին պետք է ներկայացնի նոտարական կարգով վավերացված լիազորագրի բնօրինակը, իր անձը հաստատող փաստաթուղթը և ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:
5.21.1. Լուծարվող (անվճարունակության գործընթացում գտնվող) իրավաբանական անձի հաշիվ բացելու դեպքում լուծարային (անվճարունակության գործով) կառավարիչը ներկայացնում է լուծարման (անվճարունակության) և լուծարային կառավարիչ նշանակելու վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի որոշումները:
5.22. Կառուցապատողի հատուկ հաշվի բացման համար հաճախորդը Բանկին պետք է ներկայացնի նաև իր կողմից կառուցվող շենքի շինարարության թույլտվության պատճենը:
5.23. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը բանկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
5.23.1. Տնօրենի(ղեկավարի) անձը հաստատող փաստաթուղթը,
5.23.2. մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկատվության) (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում), ընդ որում.
մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկության) բնօրինակի նոտարական կարգով վավերացված

հայերեն թարգմանությունը, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք (տեղեկություն):

5.23.3. լիազորված անձի (անձանց) կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի (անձանց) լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,

5.23.4. ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի գրանցումն հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,

5.23.5. ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի ղեկավարի գրանցման և իրավասության մասին փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, իրավաբանական անձի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված նոտարական կարգով,

5.23.6. ոչ ռեզիդենտի հիմնադիր փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադիր պայմանագիր և այլն) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը.

5.24. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» (Know your customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

5.25. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել հաճախորդից լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

5.26. ՀՀ օրենսդրության, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներից ելնելով՝ Բանկի կողմից կարող են հաչախորդից պահանջվել այլ փաստաթղթեր, համաձայնություններ, տեղեկություններ:

5.27. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և պարբերականությամբ Բանկը տրամադրում է հաշվետիրոջը հաշվի վերաբերյալ քաղվածքներ վերջինիս նախընտրած լեզվով:

5.28. Էսքրոու հաշվի վրա դեպոնացվում են գործարքի կատարման համար էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարման ենթակա էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից մուտք արված գումարները (էսքրոու միջոցները)՝ որպես գործարքի կատարման երաշխիք: Էսքրոու հաշվին մուտքագրված Էսքրոու միջոցները Բանկը (Էսքրոու գործակալը) Էսքրոու պայմանագրով սահմանված կարգով կարող է վճարել էսքրոու միջոցների հասցեատիրոջը կանխիկ կամ փոխանցվել նրա նշած հաշվին՝ Էսքրոու պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Էսքրոու պայմանագրով սահմանված փաստաթուղթը Բանկին (Էսքրոու գործակալին) ներկայացնելու դեպքում կամ էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից Բանկին (Էսքրոու գործակալին) էսքրոու միջոցները էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարելու վերաբերյալ գրավոր հանձնարարական տրամադրելու դեպքում:

5.29. Էսքրոու պայմանագրով սահմանված ժամկետներում Էսքրոու պայմանագրով սահմանված փաստաթուղթը Բանկին չներկայացնելու դեպքու էսքրոու հաշիվը ձևակերպվում է որպես էսքրոու միջոցները մուտքգրողի հիմնական բանկային հաշիվ՝ վերջինիս կողմից այդ հաշվի միջոցները տնօրինելու իրավունքով:

5.30. Էսքրու միջոցները էսքրոու հաշվից ելքագրելուց /հաշվի մնացորդը զրոյական դառնալուց/ հետո հաշիվը փակվում է:

5.31. Էսքրոու հաշիվը կարող է բացվել ինչպես ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ), այնպես էլ իրավաբանական անձի համար:

5.32. Առարկայազուրկ մետաղական հաշիվը ցպահանջ հաշիվ է՝ նախատեսված անկանխիկ ոսկու հաշվառման համար, որը բացվում է միայն 999.9 հարգով և որով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները.

5.32.1. մետաղական հաշվի համալրում՝ Բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով, ինչպես նաև հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով,

5.32.2. մետաղական հաշվի ելքագրում՝ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով, ինչպես նաև հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:

5.33. Մետաղական հաշվով գործառնությունների իրականացման ժամանակ հիմք են ընդունվում Բանկի կողմից սահմանված 1 գրամ անկանխիկ ոսկու առքի և վաճառքի փոխարժեքները:

5.34. Առարկայազուրկ մետաղական հաշվով գործառնությունները չեն ենթադրում ոսկու կանխիկ մուտքագրում և ելքագրում:

5.35. Առարկայազուրկ մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

5.36. Հաճախորդներին Բանկի կողմից առաջարկվող բանկային ծառայությունների մատուցման կարգը, ձևը, պահանջները, սկզբունքները, հաճախորդների իրավանուքները և պարտավորությունները, պատասխանատվությունը ու ընդհանուր այլ պայմանները սահմանվում են Բանկի Վարչության կողմից

հաստատվող՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ»-ով, որին կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.aeb.am/hy/sakagner/:

5.37. Բանկի կողմից առանձին հաճախորդի համար կարող են սահմանվել սույն տեղեկատվական ամփոփագրով սահմանված ծառայության այլ սակագներ (այդ թվում ավելի բարձր կամ ավելի պակաս) կամ ծառայությունը մատուցվել առանց համապատասխան սակագնի գանձման:

«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՁԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: